ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

01.10.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 765-Ա

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025թ. հուլիսի 18-ի թիվ ՍԴ3/0134/02/25 վճիռը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետի ա)պարբերությունը և Գորիսի համայնքապետարանի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 1-ի նիստի արձանագրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ակներ գյուղի 3-րդ փողոցի թիվ 3 հասցեի փաստացի բնակչուհի Հասմիկ Սամվելի Տատինցյանին (ծնված 10.01.1983թ.) սահմանել խնամակալ իր աղջկան՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված Էլինա Արտակի Վանեսյանի (ծնված 03.04.2006թ.) նկատմամբ:

2.Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 01
ք. Գորիս